

## ՓԱՇԽՆԱՆԵՆ ՇՆՈՐՀԱԴՈՐԱԿՔ ՓՈՒԹԻՆԻՆ

Ռուսիոյ ազգային օրուան առթիւ, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան երկէ շնորհաւորական ուղերձ յղեց Ռուսիոյ նախագահ Վլադիմիր Փութինին, որուն մէջ շնորհաւորեց տօնը եւ համոզում յայտնեց, որ Հայաստանի եւ Ռուսիոյ ժողովուրդներուն բազմակողմանի կապերը, պետական փոխադարձ շահերու վրայ հիմնուած կառուցողական երկխօսութիւնը պիտի նպաստէ համագործակցութեան ամրապնդումին: Նշենք, որ ռուսական կողմը վերջնականապէս առիթով տակաւին չէ շնորհաւորած Փաշինեանը, պատճառաբանելով թէ կը սպասեն վերջնական արդիւնքներու հրապարակումին:

## ՍԱԼԱՍ. «ԻՐԱՆ ՄԵՐԺԵՑ ԼԻՔԱՆԱՆԻ ԶԻՆԱԴԱԴԱՐԸ»

Վարչապետ Նաուաֆ Սալամ Իրանը ամբաստանեց մերժելու լիբանանեան ճակատին վրայ պատերազմին վերջ դնող զինադադարի համաձայնութիւնը, որուն Լիբանանի կառավարութիւնը յանգած էր Ուաշինկթընի մէջ խորհրդակցական կողմին հետ բանակցելով: Ըստ Սալամին, Թեհրան մերժած է այս զինադադարը, որպէսզի չշեշտէ, թէ վերջնական որոշումը կը պատկանի իրեն: «Այս կը բացայայտէ Իրանի



յեղափոխական պահակագունդին տիրապետութիւնը Յրդ-պալլային վրայ, ինչ որ առկայ չէր Նախկին ընդհանուր քարտուղար սեյիտ Հասան Նասրալլայի օրերուն», շեշտեց վարչապետը: Ան սակայն շեշտեց, որ լաւատես է Լիբանանի ապագայով:

### ԻՍՐԱԵԼ ՊԻՏԻ ԶԵԱՇՈՒԻ

Իսրայէլի պաշտպանութեան նախարար Իսրայէլ Զազ շեշտեց, որ իրենք չեն մտադրեր քաշուիլ լիբանանեան եւ սուրիական հողերէն, այլ անհրաժեշտ ցուցմունքները տուած են բանակին՝ նախապատրաստուելու անհրաժեշտութեան պարագային զինուորական լայնածաւալ գործողութիւններու ձեռնարկումին:

### ՊԱՏԵՐԱԶՍԸ ՂԱԴՐԵՑՆԵԼՈՒ ՄԻՏՈՒՄ

Սուրիոյ նախագահ Ահմատ Զարաա հերքեց, որ Ղամասկոս մտադրութիւն ունի զինուորականօրէն մուտք գործելու Լիբանան: Այդ մասին վերջերս տարածուած լուրերը համարելով անհիմն տարածանքներ, սուրիացի նախագահը յայտնեց, որ իրենց հիմնական նպատակն է վերջ տալ պատերազմին, ոչ թէ գայն աւելի ընդարձակել:

## ԻՐԱՆԻ ՀԱՐՅՈՎ ԼՈՒԹՈՒՄԻ ՀԱՎԱՍԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Փաքիստանի վարչապետ Մոհամմատ Շահպազ շերիֆ յայտնեց, որ Միացեալ Նահանգներն ու Իրան մշակած են խաղաղութեան համաձայնութեան վերջնական յօդուածները, իսկ այժմ կ'ամբողջանան զինադադար կնքելու վերջին նախապատրաստութիւնները: Միացեալ Նահանգներու նախագահ Տոնըլտ Թրամփ Թեհրանը ամբաստանեց փոխըմբռնումի յուշագրի մը մասին անհիմն լուրեր տարածելու



եւ ենթադրեալ համաձայնութեան յօդուածները մամուլին միջոցաւ հրապարակելու մէջ: Ժամեր առաջ տարածուած տեղեկութիւնները նշած էին, թէ Ուաշինկթընի ու Թեհրանի միջեւ գոյցէ յառաջիկայ օրերուն ստորագրուի փոխըմբռնումի ժամանակաւոր յուշագրի մը, որուն հիման վրայ պիտի վերաբացուի Հորմուզի նեղուցը, պիտի վերացուի ամերիկեան պաշարումը եւ 60 օրուան ընթացքին պիտի կնքուի ամբողջական համաձայնագիր մը: Այսուհանդերձ, ամերիկացի պաշտօնատարներ կը շեշտեն, որ Իրանի հրապարակած յօդուածները սխալ են եւ թէ Իրանի գրաւուած գումարները պիտի չվերադարձուին, մինչեւ որ Թեհրան գործադրէ համաձայնութիւնները: Իրանի Արտաքին գործերու նախարարութեան բանբերը իր կարգին շեշտեց, որ երկու կողմերը շատ մօտեցած են հակամարտութեան կարգաւորումին:

## ՎԱՂԸ՝ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴԻՒՆՔՆԵՐՈՒ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

Կ'անկալուի, որ Հայաստանի Կեդրոնական ընտրական յանձնաժողովը վաղը հրապարակէ շաբաթ մը առաջ՝ 7 Յունիսին տեղի ունեցած խորհրդարանական ընտրութիւններուն վերջնական արդիւնքներն ու ընտրական թղթածրարին վերաբերեալ կայացուցած որոշումները: Նախանցեալ օր, յանձնաժողովը անվաւեր համարեց երկու ընտրատեղամասի արդիւնքը, որուն պատճառով «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնը վերստին կորսնցուց այն աթոռները,



որոնց տիրացած էր որոշ շրջաններու մէջ քուէներու վերահաշուարկի լոյսին տակ: Ընդդիմադիր շարք մը խմբակցութիւններ կը շարունակեն մերժել արդիւնքները, պահանջելով կազմակերպել վերաքուէարկութիւն: «Ուժեղ Հայաստան» դաշինքը ներկայացուց ընտրութեան արդիւնքները անվաւեր յայտարարելու եւ նոր քուէարկութիւն կազմակերպելու դիմում, իսկ դաշինքի թեկնածուներէն

Շարունակութիւնը տեսնել էջ 2

## ՄԻՏՆԻ. «ԱՐԱՐԱՏ»-Ի ՏՆՕՐԵՆ ԸՆԿ. ՆԱԶԱՐԵԹ ԾԵՐԷՃԵԱՆԻ ԲՈՎԱՆ ԴԱԿԱԼԻՑ ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ

Կազմակերպութեամբ Միտնիի Նոր Սերունդ Մշակութային Միութեան, Ուրբաթ, 12 Յունիս 2026-ի երեկոյեան, Միտնիի West Ryde Community Hall սրահին մէջ տեղի ունեցաւ գաղութը հիւրաբար այցելող՝ «Արարատ» օրաթերթի տնօրէն ընկ. Նազարեթ Ծերեճեանի բանախօսութիւնը՝ Միջին Արեւելքի հայկական



գաղութներու ներկայ մարտահրաւերները եւ ապագայի հեռանկարները՝ խորագրին տակ: Ընկ Ծերեճեան խօսեցաւ տարածաշրջանի հայ համայնքներուն առջեւ ծառայած խնդիրներուն, դիմագրաւած մարտահրաւերներուն եւ զարգացումի հնարաւոր ուղիներուն մասին: Բանախօսութեան ներկայ էին Աւստրալիոյ եւ Նոր Զելանտայի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Վարդան եպս. Նաւասարդեան, արժ. Տ. Աւետիս քնյ. Համբարձումեան, Աւստրալիոյ ՄԴՀԿ Աւստրալիոյ Վարիչ մարմինի ատենակապետ ընկ. Սեպուհի Գալիպաքեան եւ Վարիչ մարմինի անդամներ, համայնքային կազմակերպութիւններու ներկայացուցիչներ եւ բազմաթիւ հայորդիներ: Շուրջ մէկ ժամ տեւած բանախօսութեան կողքին տեղի ունեցաւ երաժշտութեան եւ ասմունքի մատուցում, որ արեւելի հանդիսաւոր մթնոլորտ հաղորդեց երեկոյին: Ձեռնարկի արարտիւն սրտի խօսք փոխանցեց Սրբազան Հայրը, որ նաեւ իր «Պահպանիչ»-ով փակեց ձեռնարկը: Երեկոյթը եզրափակուեցաւ «Սարդարապատ»-ի յաղթերգով: **Ձեռնարկին մանրամասն թղթակցութիւնը պիտի հրապարակուի մեր յառաջիկայ՝ երեքշաբթի օրուան թիւով:**

## ՇՆՈՐՀԱԴՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐԶ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԱՌԻԹՈՎ

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական վարչութիւնը կը շնորհաւորէ Հայաստանի Հանրապետութեան բոլոր քաղաքացիները, հերթական արդար, ազատ ու թափանցիկ ընտրութիւններուն առթիւ: Հակառակ աննախադէպ ու բացայայտ արտաքին միջամտութեան, ինչպէս նաեւ ընդդիմադիր շարք մը ուժերու կողմէ լայնածաւալ ընտրակաշառքի եւ այլ միջոցներու կիրառման, Հայաստանի քաղաքացին իր քուէի ուժով գերադասեց ինքնիշխանութիւնը՝ գաղութացումէն, հարեաններուն հետ խաղաղ գոյակցութիւնը՝ յարատեւ թշնամութենէն եւ տնտեսական բազմազանութիւնը՝ մէկ շուկայի կախումէն:



## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Այս առթիւ, կը շնորհաւորենք վարչապետ Նիկոլ Փաշինեանը եւ «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցութիւնը՝ այս վճռորոշ ընտրութիւններուն արձանագրած տպաւորիչ յաղթանակին առթիւ: Միաժամանակ կ'ուզենք արձանագրել, որ վարչապետին ու անոր խմբակցութեան եւս մէկ անգամ վստահելով երկրի կառավարման դէպք՝ Հայաստանի քաղաքացին կը վերահաստատէ այն իրողութիւնը, որ հայրենիքը կը գտնուի ճիշդ ուղիի վրայ եւ կ'անկալել խաղաղութեան գործընթացի շարունակութիւն, Եւրոպական միութեան եւ Միացեալ Նահանգներու հետ ռազմավարական ու տնտեսական յարաբերութիւններու խորացում, ինչպէս նաեւ բնակչութեան բարօրութեան ու կենսամակարդակի բարելւման ուղղուած ծրագրերու իրագործում:

Եթէ 2021 թուականի ընտրութիւններուն հայրենիքի գլխուն Դամոկլեան սուրի նման կախում էր գոյութեան վտանգը, ապա այսօր երկիրն ու տարածաշրջանը յամրաբայլ կը մտնեն խաղաղութեան ու տնտեսական համագործակցութեան նոր դարաշրջան, ուր Հայաստանի վերապահուած է կարեւոր դերակատարութիւն: Սակայն վերջինս կը պահանջէ խելամիտ ու կշռադատուած որոշումներ եւ՝ գործադիր իշխանութեան եւ Ազգային ժողովին կողմէ: Հետեւաբար, լիայոյս ենք, որ թե՛ ընտրապայքարով ձեւաւորուած նոր Ազգային ժողովը ձեռնամուխ կ'ըլլայ արդիւնաւետ օրենսդրական աշխատանքի, որ ընդդիմութիւնը եւս իր կարեւոր ներդրումը կ'ունենայ, փոխանակ անտեղի հետապնդելու իշխանափոխութեան ամուլ նպատակը:


Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւն

9 Յունիս 2026

## ԶԱՅՆԵՐ ԿԻՊՐՈՍԷՆ

(Կապուլթային արձագանգ) - 2

ԼԻՄԱՍՈՒՆ Ս. Գերբ եկեղեցւոյ մէջ, 3 Մայիսի կէսօրին, կիրակնօրեայ պատարագէն անմիջապէս ետք, Համագալիսի տեղւոյն «Դանիէլ Վարուժան» մասնաճիւղը սարքած է երաժշտական ցերեկոյթ մը՝ «Լոյս եւ աղօթք» խորագրով: Ձեռնարկին ներկայ եղած են Աթենքէն Կիպրոս ժամանած յունահայ ուխտաւորներ եւս, ինչպէս նաեւ կիպրահայ համայնքի պետական ներկայացուցիչը՝ պրն. Վարդգէս Մահտեսեան: Ցայտագրին մէջ դեր ստանձնած են երեք հոգի՝ Չարա Բարխուտարեան (դաշնամուր), Էտկար Էլոյիսեան եւ Սոնա Սարաճեան (երգ): Անոնք եկեղեցւոյ խորհրդաւոր մթնոլորտին մէջ ինչեցուցած են հայերէն դասական երգերու երկար շարք մը, վերապրեցնելով Կոմիտասն ու Սայաթ-Նովան, Խաչատուր Աւետիսեանն ու Սպենդիարեանը, Համբարձում Պէրպերեանն ու Աննա Բարբաքանեանը, Աշոտ Սարթեանը, Ռ. Ամիրխանեանը ու այլ դէմքեր:



(Շարունակութիւնը տեսնել էջ 2)

# ՎԱՂԸ՝ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴԻՆՔՆԵՐՈՒ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

Շարունակում էջ 1-էն

Նարեկ Կարապետեան պնդեց, թե իշխանությունը պիտի հատ է բոլոր կարմիր գիծերը, եթե չընդունի իրենց դիմումը: «Բարգաւաճ Հայաստան»-ի առաջնորդ Գագիկ Ծամոնեան յայտնեց, որ իրենք պիտի ձեռնարկեն շարք մը քայլերու, որոնց նպատակն է պաշտպանել արդարությունը: Ընդդիմադիր ուժերու հետեւորդներ երկ կերկոյեան բողոքի հաւաք մը կազմակերպեցին ընտրական յանձնաժողովի գրասենեակներուն առջեւ: Միւս կողմէ, ներքին գործերու նախարար Արփինէ Սարգսեան ընտրութիւնը համարեց արդար ու թափանցիկ, շեշտելով թէ որեւէ հիմնաւորում չկայ անվաւեր ճանջնալու արդիւնքները:

## ԱՐՏԱՔԻՆ ՔԱՎԱՏԱՆԸ

Արաբական Միացեալ Էմիրութիւններու նախագահ Սոհամմաու ալ Չայէտ Ալ Նահիան շնորհաւորական ուղերձ յղեց Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանին՝ ընտրութիւններուն իր գլխաւորած կուսակցութեան արձանագրած յաղթանակին առթիւ: «Ձեզի կը յղեմ անկեղծ շնորհաւորանքներ, մաղթելով քաջամտ ընտրութիւն ու երջանկութիւն, իսկ բարեկամ Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան եւ ժողովուրդին՝ հետագայ յառաջընթաց եւ բարգաւաճում», նշեց Էմիրութիւններու նախագահը: Իսկ ԵԱԿԿ-ի մէջ Բրիտանիոյ փոխդեսպան Ճէյմս Ֆորտ ողջունեց Հայաստանի խորհրդարանական ընտրութիւններուն կանոնաւոր եւ արհեստավար կազմակերպումը, այնպէս ինչպէս հաստատած էին դեռերը: Ան Լոնտոնի աջակցութիւնը յայտնեց ժողովրդավարական կայունութեան ամրապնդումին:

## «ՄՈՍԿՈՎԱ ՓՈՐՁԱԾ Ե ԱԶԴԵԼ»

Երոպական խորհրդարանի վեց պատգամաւոր համատեղ յայտարարութեամբ ողջունած են Հայաստանի խորհրդարանական ընտրութիւնները՝ գանտնք գնահատելով որպէս պատշաճ կազմակերպուած եւ հայաստանցիներու ժողովրդավարական ընտրութիւնը արտացոլող:



Պատգամաւորները կը պնդեն, որ Մոսկուան փորձած է ազդել հայ ընտրողներուն վրայ՝ սպառնալիքներու, առեւտրային սահմանափակումներու եւ ապատեղեկատուական արշաւներու միջոցով: Պատգամաւորներու գնահատմամբ՝ այդ փորձերը հիմնականին մէջ ձախողած են, իսկ Եւրոմիութեան ցուցաբերած աջակցութիւնը օգնած է Հայաստանին դիմակայելու արտաքին ճնշումներուն եւ քաղաքացիներուն հնարաւորութիւն տուած է կատարել ազատ ընտրութիւն: Անոնք կը ըրած են յաւելեալ քայլեր ձեռնարկելու Հայաստանի դիմակայունութիւնը ամրապնդելու համար, այդ շարքին՝ աջակցիլ տնտեսութեան բազմազան եւ ընդլայնել Եւրոմիութեան հետ առեւտրային կապերը: Պատգամաւորները նաեւ ընդգծած են վիզաներու ազատականացման գործընթացին մէջ արագ յառաջընթաց արձանագրելու եւ ԵՄ նոր Գործընկերութեան առաքելութեան շուտափոյթ տեղակայման կարելորութիւնը:

# «FLY BEIRUT»-Ը ԵՈՒՏՈՎ ԴԵՊԻ ԵՐԿԻՆՔ

«MEA» օդանաւային ընկերութեան ընդհանուր տնօրէն Սոհամմաու Յուբ յայտնեց, որ 2027-ի Յունիսէն սկսեալ մայր ընկերութեան զուգահեռ պիտի գործէ նաեւ աւելի յարմար սակագիներով տոմսեր առաջարկող «Fly Beirut» օդանաւային ընկերութիւնը: Սկզբնական շրջանին, «Fly Beirut» պիտի աշխատի «A320» տիպի հինգ օդանաւերով, ուղեւորներ փոխադրելու դէպի Տուսայ, Փարիզ, Իսթան-



պուլ, Պեռլին, Տիւրքմենքանդապ, Ամսթըրտամ եւ Բուքարէստ: Պրագիլի մէջ օդային փոխադրութեան համագումարի մը մասնակցած առեւ Յուբ նաեւ յայտնեց, որ «MEA» յառաջիկայ ամիսներուն պիտի օժտուի «A-330-900» օդանաւերով, իսկ կ'ակնկալուի, որ Նոյեմբերին Պելրուսի հասնի առաջին «A-321 XLR» տիպի օդանաւը, որ ընկերութեան հնարաւորութիւն պիտի տայ նոր շուկաներ բանալու ափրիկեան աւելի հեռաւոր քաղաքներու մէջ: «MEA» սակայն առայժմ չի ծրագրեր աշխատիլ Բլեյթաթի վերանորոգում ընդէ Մուսուաթի անուան օդակայանէն:

# ԶԱՅՆԵՐ ԿԻՊՐՈՍԷՆ

(Շարունակում էջ 1-էն)

**ԿԻՊՐՈՍԻ** հայ համայնքի պետական ներկայացուցիչ երեսփոխանական աթոռը դարձեալ գրաւած է **պրն. Վարդգէս Մահտեսեան**, որ արդէն տարիներ ի վեր կը վարէր այդ պաշտօնը: Մահտեսեանի վերընտրութեան պաշտօնական յայտարարութիւնը կատարուած է 7 Մայիսին, խորհրդարանական ընտրութիւններու յանձնակատարին կողմէ: Մահտեսեան հանդիսացած է անմրցակից միակ թեկնածուն եւ ուստի՝ իրեն վստահուած է 2026-2031 հնգամեակին կիպրահայ համայնքի պետական ներկայացուցիչ կարելու պաշտօնը: Մահտեսեան, որ ներկայիս 76 տարեկան է, իր հայկական կրթութիւնը ստացած է Լիկոսիոյ երբեմնի Մելիքեան-Ուզունեան վարժարանէ: Յայտնի գործարար է:



**ՆԻԿՈՍԻՈՅ** ազգ. առաջնորդարանի «Իւթիւճեան» սրահին մէջ, 8 Մայիսին, հայոց հնադարեան Ս. Մակարայ վանքին վերանորոգութեան ծրագրերուն մասին զեկուցումներով հանդէս եկած են հնագետներ Բարսի Զարդարեան (ձախէն երկրորդ) եւ Ս. Սոյուզու (աջէն երկրորդ)՝ Կոմիտաս սրբազանի հետ:



Մետնան Սոյուզու: Ինչպէս ծանօթ է, Մակարայ վանքը 1974-էն ի վեր կ'իյնայ Կիպրոսի թրջական բաժնին մէջ եւ հասու չէ հայութեան: Միայն վերջին տարիներուն է որ, ՄԱԿ-ի միջնորդութեամբ, երբեմն կարելի կ'ըլլայ արտօնութիւն ձեռք բերել թուրք իշխանութիւններէն եւ ուխտաւոր խմբակներով այցելել վանքին լքեալ ու կիսաւեր համալիրը...:



**ԿԻՊՐՈՍԻ** թրջական բաժնին մէջ գտնուող Ս. Մակարայ հայկական վանքին ուխտագնացութիւնը, որ պիտի կատարուէր Կիրակի, 10 Մայիսին, վերջին պահուն ջնջուէր է թուրք իշխանութեանց կողմէ, «ապահովական պատճառներով»: Կիպրոսի հայոց ազգ. առաջնորդարանը հաղորդագրութիւն մը հրատարակելով այս առնչութեամբ՝ յայտնած է որ առաջարկ ստացած են Ս. Մակարի փոխարէն այց կատարել Լիկոսիոյ գրաւեալ (թրջական) գոտիին մէջ մնացած նախկին Ս. Աստուածածին հայոց եկեղեցին...:

Ս. Մակարի վանքին ուխտագնացութիւնը ամենաբար միշտ տեղի ունեցած է ամէն տարուան Մայիսի առաջին Կիրակին՝ զուգահեռելով Աղեքսանդրիոյ Ս. Մակար ճգնաւորին ձուլումը տօնին: Ենթադրաբար ԺՄ. դարուն հիմնուած այս վանքը 1420-ական թուականներուն անցած ըլլալ կը կարծուի հայոց տնօրինութեան տակ եւ մինչէ 1974-ի թրջական ներխուժումը՝ հանդիսացեր էր կիպրահայութեան մայր ուխտատեղին: Ունեցած է ընդարձակ տարածութիւն եւ ձիթնիկ պարտեզներ:

**ՆԻԿՈՍԻՈՅ** քաղաքապետարանի հանդիսարահին մէջ, 9 Մայիսին, Համագայի կարի «Սիփան» համոյթը սարքած է իր տարեկան ներկայացումը, այս անգամ՝ լիբանանահայ պարուսոյց Գրիգոր Զէլէշեանի ղեկավարութեամբ: Համոյթին ընկերակցած է Հայաստանէն ժամանած նուագախումբ մը եւ ժողովրդային երգիչ Վարդան Պատալեան: Ներկայացման մէջ մասնակի բաժիններ վերցուցած են նաեւ Լիմասոլի եւ Պաֆոսի հայկական պարախումբները ալ:

**ԿԻՊՐՈՍԻ** գտնուած է, Մայիսի կէսին, եռօրեայ այցելութեամբ, Արցախի անկեալ հանրապետութեան խորհրդարանի վերջին նախագահը՝ Աշոտ Դանիէլեան, ընկերակցութեամբ Բ.Յ.Ղ. Արցախի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Արա Պուլուգեանի: Հիւրերը այցելած են ազգ. առաջնորդարան, Նարեկ վարժարան, հանդիպում ունեցած են կիպրահայոց պետական ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեանի հետ: Հարցազրոյց մըն ալ տրուած է հայկական ռատիոկայանին:

**ՆԻԿՈՍԻՈՅ** Գ.Ս.Ը.Մ.-Բ.Ե.Մ.-ի ակումբի սրահին մէջ, 15 Մայիսին, զեկուցական հանդիպում մը կայացած է հանրութեան հետ, անցեալ Ապրիլին Փարիզ գումարուած «Սփիւռքի ազգային զօրաշարժի խորհրդաժողովի»-ին արծարծած նիւթերուն շուրջ: Բացման խօսք արտասանած է Սիմոն Այնեճեան: Գլխաւոր զեկուցաբերը եղած է Յակոբ Գագանճեան (ատենապետ Հայ դատի յանձնախումբի), որ Կիպրոսէն մասնակցութիւն բերած էր փարիզեան ժողովին: Հանդիպումին ներկայ եղած ու խօսք առած է նաեւ Արցախի Հանրապետութեան խորհրդարանի վերջին նախագահը՝ Աշոտ Դանիէլեան, որ նմանապէս մասնակցեր էր Փարիզի խորհրդաժողովին: Խօսուած է արցախահայութեան տուն վերադարձի իրաւունքին մասին:

**ԼԻՄԱՍՈՒՆ** Ս. Գեորգ եկեղեցւոյ սրահին մէջ, 16 Մայիսի երեկոյեան, մեծ թիւով ընտանիքներ մէկտեղուած են յարգարեալ սեղաններու շուրջ եւ ընկերային հաւաքով մը նշած են «Մայրերու տօն»-ը: Ձեռնարկը կազմակերպուած է եկեղեցւոյ թաղականութեան կողմէ: Հաճելի հաւաքը զգեցած է միաժամանակ զեկուցական ընտրութեան քննարկները մտայնութեամբ: Նարեկ վարժարանի աշակերտները մասնակցութիւն բերած են ծանօտացումը: Յարցազրոյցները մասին բանախօսութեամբ մը անդէս եկած է Սիմոն Այնեճեան: Օրուան գլխաւոր բանախօսը (հայերէնով) հանդիսացեր է Պելրինէն հրապարակած երկուստար յայտարարի մը՝ ճոնաթան Շպակեանի (Այնճարի Հայ Աւետ. երկր. վարժարանի երբեմնի սան), որ ներկայիս Գերմանահայոց կեդրոնական խորհուրդի նախագահն է: Հոսկ, թեմի կաթողիկոսական փոխանորդին գրաւոր պատգամը ընթերցած է Մաշտոց աւ. քին. Ազգարեան: Գիշերը, մարզադաշտի սրահին մէջ տեղի ունեցած է խրախմանք՝ երգիչ Դազար Քեօշկերեանի մասնակցութեամբ:



Նարեկ վարժարանի սաները՝ «Մայրերու տօն»-ի համալիրը:



Մեծարեցի մասին կը բանախօսէ Տ. Արապաթեան:

Մեծարեցի մասին կը բանախօսէ Տ. Արապաթեան: Երգ ու ամուսնէ բաղկացած պատշաճ յայտագրի մը առընթեր՝ բաւաստեղծին մասին բանախօսութեամբ մը հանդէս եկած է հայերէնաւանդ երիտասարդ ուսուցիչ ճորճ Արապաթեան, որ Զուլթէն հեռանալէ ետք՝ այժմ հաստատուած է Կիպրոս: Երեկոյթի ընթացքին մատուցուած է գինի ու թեթեւ ընթրիք: Ինչպէս ծանօթ է, Մեծարեցի ճիշդ Դուրեանի նման գոհ գնաց թեւախտի, 22 տարեկանին: Ակնայ Բինկեան գիղէն կու գար: Ծնողաց հետ փոխադրուած էր Պոլիս ու շրջան մը յաճախած Կեդրոնական վարժարան: Բնութեանապաշտ ու գերզգայուն բանաստեղծ մըն էր, որ մահէն տարի մը առաջ՝ 1907-ին, կրցաւ հրատարակել քերթուածներու երկու գիրքեր՝ «Ծիածան» եւ «Նոր տաղեր», արտակարգօրէն գեղատուն ու ինքնատիպ բովանդակութեամբ: Այդ օրերուն շատեր չհասկցան գինը, չկրցան ճանչնալ իր տաղանդին մեծութիւնը: Յաջորդող տասնամեակները, սակայն, դափնեպսակներ դրին իր գլխուն:



Վերագտնուած հայերէն Աւետարանը

**ՆԻԿՈՍԻՈՅ** գտնուած է, Մայիսի վեջերը, Աթիլիսի մայրավանքին մատենադարանապետը՝ Շահան արք. Սարգիսեան, որ նաեւ պատարագած ու քարոզած է տեղույն Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ: 26 Մայիսին, Շահան սրբազան կիպրահայոց կաթողիկոսական փոխանորդ Կոմիտաս արք.-ի ընկերակցութեամբ այցելած է քաղաքին Բիւզանդական թանգարանը, ուր գիրքեք ընդունած է հաստատութեան տնօրէնը: Այստեղ, հայ հոգեւորականներուն ցոյց տրուած է ԺԴ. դարու հայերէն Աւետարան մը, որ բերուած է Ս. Մակարայ վանքէն: Ըստ տրուած բացատրութեան՝ 1974-ի թրջական ներխուժումէն ետք Աւետարանը գողցուած է վանքէն, սակայն «Ինթերֆոլ»-ի ջանքերով կարելի եղած է 2015-ին գայն գտնել Միւնիխի մէջ ու Կիպրոս վերադարձնել...: Այժմ անկեալ կը ցուցադրուի Բիւզանդական թանգարանին մէջ:

**ՆԻԿՈՍԻՈՅ** ՀՕՄ-ի «Սօսէ» մասնաճիւղը, 29 Մայիսին, Մայրերու տօնին առթիւ սարքած է հաւաք մը, որու ընթացքին Նայիրի Մուրատեան շահեկան դասախօսութեամբ մը անդրադարձած է Սփիւռքի ժամանակակից կին մտաւորականներէն տիկ. Սոնա Չէլթեանի հանրային, կրթական ու գրական վաստակին: Պիտի յիշուի, որ տիկ. Չէլթեան ուշադրութեան արժանացած էր 1968-ին, երբ լոյս ընծայած էր «Հայ կնոջ դերը հայ յեղափոխական շարժման մէջ» հատորը (Աթիլիսի): Անկէ ետք, 80-ականներուն, ան հեղինակած էր «Արի արանց» մանկապատանեկան հատորներու շարքը (հայոց հնագոյն պատմութեան քաղաքը հերոսական դրուագներով), որ նմանապէս գտած էր լայն ընդունելութիւն: Ձեռնարկի ընթացքին Նարինէ Գոնճայեան-Արապաթեան ասմունքած է Նորերս մահացած Թաթուլ Սոնեց-Փափագեանի «Խաչուհիները» քերթուածը, յետոյ երեկոյթը շարունակուած է ընկերային մթնոլորտով:



Դասախօսութիւն՝ Սոնա Չէլթեանի մասին Կատարեան կրտսերի կողմէ:

**ՆԻԿՈՍԻՈՅ** Գ.Ս.Ը.Մ.-Բ.Ե.Մ.-ի մարզադաշտին վրայ, 6 Յունիսին, տօնաւմբուած է Հայաստանի Ա. Հանրապետութեան անկախութեան 108-րդ տարեդարձը: Ձեռնարկին նախագահած է կիպրահայոց պետական ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեան: Տարագաւոր սկաւտներ, գայիկներ եւ պարախումբի պատանի տղաք մասնակից եղած են յայտագրին: Յունարեւոյ ուղերձ մը կարդացած է Սիմոն Այնեճեան: Օրուան գլխաւոր բանախօսը (հայերէնով) հանդիսացեր է Պելրինէն հրապարակած երկուստար յայտարարի մը՝ ճոնաթան Շպակեանի (Այնճարի Հայ Աւետ. երկր. վարժարանի երբեմնի սան), որ ներկայիս Գերմանահայոց կեդրոնական խորհուրդի նախագահն է: Հոսկ, թեմի կաթողիկոսական փոխանորդին գրաւոր պատգամը ընթերցած է Մաշտոց աւ. քին. Ազգարեան: Գիշերը, մարզադաշտի սրահին մէջ տեղի ունեցած է խրախմանք՝ երգիչ Դազար Քեօշկերեանի մասնակցութեամբ:



Անկախութեան օրուան տօնարարութիւնը նկատուող մէջ:

L. G.

# ԳՐԱՍԷ՛Ր ԸՎՅՈՐԴԻ, ՍԱՏԱՐԷ՛՝ «ԱՐԱՐԱՏ»-Ի 89-ԱՄԵԱՅ ԳՈՅԵՐԹԻՆ

«ՄԱՍԻԱ» - ՄԵՐ ԱՆԿԻԲԱԷՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԸՆՏՐԵՑ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ, ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Աւարտին հասաւ Հայաստանի ամենէն հետեւանքային ընտրութիւններէն մէկը, որ եկաւ կողմնորոշելու երկրի ներքին ու արտաքին քաղաքական ուղղութիւնը՝ յառաջիկայ տարիներու ընթացքին: Արդիւնքներով գոհ են հայ հասարակութեան մեծամասնութիւնը՝ Հայաստանի եւ Սփիւռքի տարածքին: Գոհունակութիւն կը յայտնեն ու շնորհաւորանքներ կ'ուղարկեն նաեւ եւրոպական երկիրները, որոնք վերջին օրերուն հասան Հայաստանի օգնութեան՝ մեղմելու համար Ռուսաստանի սահմանած տնտեսական պատժամիջոցները:

Արձանագրուած արդիւնքներէն հիասթափուած են բոլոր անոնք, որոնք շատ ինքնավստահ կ'աւետէին մօտալուտ իշխանափոխութեան անխուսափելիութիւնը: Դժգոհ է նաեւ Մոսկուան, որ իր կարելիք ըրաւ ընդդիմութեան յաղթանակ ապահովելու համար:

Եւրոպական ու նաեւ Ռուսաստանի գլխաւորած ԱՊՀ երկիրներու դիտորդական առաքելութիւնները «լաւ կազմակերպուած ու մրցակցային» որակեցին ընտրական գործընթացը, մատնանշելով հանդերձ կարգ մը խախտումներ ե՛ւ իշխանութիւններուն ե՛ւ ընդդիմադիր կուսակցութիւններուն կողմէ:

Ընտրութիւններու ելքով պայմանաւորուած Հայաստանի ժողովուրդը արձանագրեց իր դիրքորոշումը կարեւորագոյն հարցերու նկատմամբ, որոնց շարքին խաղաղութիւնը, ինքնիշխանութիւնը եւ ժողովրդավարութիւնը, որոնց երեքն ալ կը կարօտին իշխանութեան մը, որ հետամուտ պիտի ըլլայ ամրագրելու ու ամրապնդելու գաւտնը:

Լիկոլ Փաշինեանի յառաջ մղած խաղաղութեան օրակարգը արժանապա քաղաքացիներու հաւանութեան: Պատերազմէն պարտուած դուրս եկած ու իր կողքին չունենալով վստահելի դաշնակիցներ, պաշտօնական Երեւանը կանգնած էր երկընտրանքի առջեւ. կա՛մ շարունակել հակամարտութիւնը ու մնալ յաւիտենական շրջափակման ու մեկուսացման մէջ, կա՛մ ալ փորձել կարգաւորել իր յարաբերութիւնները դրացի երկիրներուն հետ, որպէսզի ճանապարհի հարթուի երկրի զարգացման ու ժողովուրդի կենսամակարդակի բարձրացման ուղիւն: Որքան ալ

որ մեզմէ շատերուն համար դժուար պիտի ըլլայ հաշտուիլ պատմականօրէն թշնամի երկու երկիրներու՝ Ատրպէյճանի ու Թուրքիոյ հետ մերձեցման գաղափարին հետ, պարտաւոր ենք ըլլալ իրատես եւ ընդունիլ, որ կը գտնուիք աշխարհագրականօրէն ոչ-նպաստաւոր միջավայրի մը մէջ ու խիզախ որոշումներ կայացնելու պարտաւորութեան առջեւ կանգնած է մեր հայրենիքը: Ընտրութիւնները նաեւ տուին այդ հարցին պատասխանը ու յստակ դարձուցին ժողովուրդին մեծամասնութեան դիրքորոշումը:

Երկրորդ հարցը, որուն պատասխանը տուին ընտրողները, կը վերաբերի միջազգային յարաբերութիւններուն մէջ անկախ արտաքին քաղաքականութիւն վարելու իրաւունքին: Վերջին տարիներուն Հայաստան սկսած է վարել բազմաբեւեռ արտաքին քաղաքականութիւն՝ մեկնելով բացառապէս իր արտաքին շահերէն: Ինքնիշխանութեան հարցը դրուեցաւ քուէաթերթիկին վրայ, երբ հրապարակ եկաւ ռուսամէտ ուժերը համախմբող ընդդիմադիր ճակատ մը, որ կը պահանջէր Ատրպէյճանի հետ խաղաղութեան համաձայնագրի ճակատագիրը կապել երաշխաւոր՝ երրորդ երկրի մը հետ: Ռուսաստանի կողմէ այլեւայլ տեսակի միջամտութիւնները առաւել սրեցին իրավիճակը՝ ընտրողները դնելով իրենց երկրին ինքնիշխանութիւնը պաշտպանելու հրամայականին առջեւ: Հոս եւս Հայաստանի քաղաքացիները արտայայտեցին իրենց վճռական կեցուածքը՝ յանուն անկախութեան ու ինքնիշխանութեան:

Այս ընտրութիւններով նժարի վրայ դրուած էր նաեւ ազատ ընտրութիւններով ձեւաւորուած իշխանութիւն ունենալու իրաւունքը: Երկար տարիներ կեղծուած ընտրութիւններու ճանապարհով անցած քաղաքացիներուն համար խիստ կարեւոր էր նաեւ պաշտպանութիւնը ժողովրդավարութեան սկզբունքներուն, որոնք անկասկած պիտի վստահեցնէին եթէ այս մարզին մէջ տխուր անցեալ ունեցող ուժերը գալիս իշխանութեան՝ շրջելու համար վերջին տարիներու ձեռքբերումներն ու յաջողութիւնները:

2026-ի ընտրութիւնները անթերի չէին, որուն համար գլխաւոր պատասխանատուները ընդդիմութեան շարքերուն

ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ (ԱՄՍ)

մէջ էին: Ընտրակաշառքի լայն ձեւով օգտագործումը ստիպեցին իրաւապահ մարմինները կատարելու ձեռքարկութիւններ, որոնք այժմ կ'օգտագործուին ընտրութիւնները սեւցնելու եւ կասկածի տակ առնելու համար: Սակայն, անժխտելի իրականութիւնը կը մնայ այն, որ ամբողջ գործընթացը տեղի ունեցաւ մրցակցային ազատ պայմաններու տակ՝ ընտրողներուն տալով իրենց կամքը արտայայտելու իրաւունք, որ գերագոյն արժէք է ժողովրդավարական հասարակութիւններուն մօտ:

Հայաստան այժմ կը թեակոխէ սոր փուլ ու ժողովուրդին ակնկալիքները շատ աւելի մեծ են նորընտիր իշխանութիւններէն, որոնք պարտաւոր են կատարելու իրենց նախընտրական խոստումները, այլապէս հինգ տարի ետք կրնան ենթարկուիլ այլ ճակատագրի:

ԽԱՉՔԱՌ 84

10x10 grid for crossword puzzle 84 with some cells shaded.

- ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ
1) Զեքստի եզերքին աւելցուած ժապաւեն - Հաւքաշ:
2) Կրկին (հակ.) - Ցուրտ երկիրներու գազան ետին դարձած:
3) Մածուցիկ միթով ծածկուած ճիւղ, որով թռչուն կ'որսան - Արական անուն:
4) Կռնակի ոսկոր - Կիսուած՝ գոմ - Իգական անուն:
5) Կրկնուած բաղաձայններ - Գզուական ապտակ:
6) Ետին դարձած՝ Հռոմէական դիցուհի - Նոյն գիրերը:
7) Փորուածք - Կրկնուած բաղաձայններ - Հաստատական (հակ.):
8) Վերտիկ օփերաներէն - Հայաստանի գետերէն:
9) Արական անուն Կիսուած՝ պատարագի բաժակ:
10) Երկարակտուց ճայ - Քիթի ծակ:

- ՈՒՂՈՎՈՐԴԱԿԱՆ
1) Բոյսերու տունկերը պատրաստելու պարտեզ - Ապացոյց:
2) Անեղի ծակ - Հոլովակերտ մասնիկ:
3) Բազմէ (հակ.) - Հանդերձի ներքին կտաւ:
4) Քոսթա Կալրասի ֆիլմերէն - Անճնական դերանուն - Կէս՝ փլատակ:
5) Կապան քաղաքի նախկին անունը - Գինդ:
6) Կրկնուած բաղաձայններ - Քիթի ծորուն:
7) Եւրոպական ընդատակեայ զինեալ կազմակերպութիւն մը - Գլխատ՝ լրտես - Չի:
8) Նաւային զինուոր - Բաֆֆի երկերէն՝ «... Աքաղաղ»:
9) Ժխտական մասնիկ - Ետին դարձած՝ որոճացող կենդանի:
10) Զտուած կարագ - Մաշոդ, ծիրական:

ԽԱՉՔԱՌ ԹԻՒ 83-ԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

10x10 grid for crossword puzzle 83 with some cells shaded.

ՊԱՀՈՒԱԾ ԲԱՌ 86

Large grid for crossword puzzle 86.

- ՅԱՐԱՏԵՒ
ՅԱՐԴԱՆԿՈՂԻՆ
ՅԵՆԱԿ
ՅԻՍՈՒՆԱԿԱՆ
ՅՈՊՆԱԿ
ՆԱԽԱՐԱՐ
ՆԱԽԻՒՔ
ՆՇԱԲԱԿ
ՆՇԿԱԳԵԼ
ՈՐԱԿԱԻՈՐ
ՈՐԻՁ
ՈՒՂԵԿՈՐՈՅՍ
ՈՒՆԱՅՆ
ՈՒՈՆ
ՈՒՍԵԱԼ
ՈՒՐԿԱՆՈՑ
ՍԻՆՁ
ՍԿԱՅԱԿ
ՍՂՈՑ
ՍՊԱՍԵԱԿ
ՍՏՆԱԻՈՐ
ՏԱՐՐԱԿԱՆ
ՏԵՏՐԱԿ
ՏԻՏԱՆ
ՏՈՐՐ

- ԱՂՏՈՑ
ԱՆԿՈՒՏԻ
ԱՆՅԱՐԻՐ
ԱՌՈՒԱԿ
ԱՐԱԿԱՆ
ԱՐԵԻԱԳԱՐՁ
ԱԲԱՆԱԿ
ԱԲԱԶ
ԳԱՐԱԻ
ԳԵՂՕՆ
ԳԻՆԳ
ԳՐԱԿԱԼ
ԳՐԱՍՏ
ԳՐԱԻ
ԳՐԱԻԻԻԻԹՈՍ
ԼԱԼԿԱՆ
ԳՐԱԻԻԻԻԹՈՍ
ԵԼՔ
ԵՌԱՆԳ
ԵՌՈՒՆ
ԵՐԱՆԳ
ԹԱՇԿԻՆԱԿ
ԹԱՐԹԻՁ
ԹԱԻՈՒՏ
ԹԱՓՈՒՐ
ԹՆԴԱԼ
ԹՈՒԹ
ԼԱԲԻԻԻԻԹՈՍ
ԼԱԼԿԱՆ
ԼԱԿՈՆԱԿԱՆ
ԼՍԱՐԱՆ
ԿԱԹԻԼ
ԿԱՏԱԿ
ԿԱՏԱՐ (2)
ԿԱՏՈՒ
ԿԱՐԾԻՔ (2)
ԿՂԿԱԹ
ՀԱՍԵՍՏ
ՀԱՍՈՅԹ
ՀՐԱՍԱՆԳ
ՀԱՅՆՈՐԳ
ՀԱՆՁՐԱՆԱԼ
ՁԳՈՑ
ՁԵՆՆՈՒՐԱՐ
ՁՈՐՁ
ՍԱԿԱՆ
ՍԱՅՐԻ
ՍԱՆԱԿՅ
ՍԱՐԳԱՐԻՏ
ՍԱՐԳ
ՍԱՐՍԱՐԱԿՈՒՈ
ՍՐՐԻԿ
ՍՐՑԱՆԱԿԱԿԻՐ
ՅԱՆԴԻՍԱՆՈՒԹԻՒՆ
ՅԱՆՁՆԱՊԱՍՏԱՆ
ՅԱՌԱԶԱՍԱՐՏԻԿ

ԽԱՂԻՆ ՕՐԵՆՔԸ.
- Բառերը կրնան կարդացուիլ տարբեր ուղղութեամբ՝ հորիզոնական, ուղղահայեաց եւ շեղակի:
- Միեւնոյն տառը կրնայ գործածուիլ մէկէ աւելի բառերու մէջ:
- Դիւրութեան համար սկսիլ երկար բառերը գտնելով:

Պահուած բառը (4 տառով)՝ ԽՈՉԻ ԾԱՐՊ

ՊԱՀՈՒԱԾ ԲԱՌ ԹԻՒ 85-ԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ՝ ՅԱՄՈՅՐ

Պահուած բառին եւ խաչբառին պատասխանները տեսնել խաղերու յաջորդ թիւով

### ՀԲԸ Միութեան Վարժարաններ

## 2025-2026-Ի ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԵՍԻՆ ԱՌԻԹՈՎ ԲԵՐԿՐԱԼԻ ՈՒ ՀՊԱՐՏԱԼԻ ՎԿԱՅԱԿԱՆԱՑ ԲԱՇԽՈՒՄ

Կրթական նոր տարեշրջան մը եւս բոլորուեցաւ, ՀԲԸ Միութեան սեփական վարժարաններու հարուստ ու երախտաշատ տարեբաժնեան մէջ, որ յիշատակելի ու հպարտառիթ վարկանիշ մըն է, իր վաստակով եւ աւանդով, յուսատու հունձքով ու բերքով, նաեւ՝ ապագայի լաւատեսութեամբ ու վճռակամութեամբ:

Ոչ միայն լիբանանահայ համայնքին ու գաղութին մէջ, այլեւ՝ համայն Սփիւռքին համար, Միութեան վարժարաններու կենսատու ու հոգեպարար կրթական կառոյցները դարձած էին մէկական փարոսներ, ուրկէ լոյս եւ յոյս կը սփռէին նոր սերունդներու դաստիարակչական եւ ուսումնառական շառաւիղներուն վրայ, որպէս ապագայական բուռ կռուաններ, ամրապինդ խարիսխներ ու խոստմանքի բեռներ:

Պատահական չէ, որ մեր վարժարաններէն բիրաւոր շրջանաւարտները, յագեցած ուսումնական բարձրագոյն եւ յաջողագոյն տուեալներով, կոփուած ազգային-հայրենասիրական բուխ զգացումներով, մարդկային եւ ընկերային անշեղ սկզբունքներով, միշտ հաւատարիմ են իրենց դպրոցական, ընտանեկան, միութեանական թէ հայրենական կենդանի տեսիլներուն, նոյն ոգիով եւ յղացքով շարունակելու իրենց երթը, թէ՛ ներհայկական, թէ՛ մասնագիտական, թէ՛ ասպարէզային շրջանակներէն ներս, նախ՝ կառնած մնալով իրենց ինքնութեան ակունքներուն եւ եութեան արտայայտութիւններուն, ապա դառնալով արժանի հետերդներն ու կրողները հայ ժողովուրդին:

Այս առումներով ու հասկացողութեամբ, ՀԲԸ Միութիւնը ոչ միայն լիացած է իր առաքելութեամբ, այլեւ՝ ոգեւորուած է, որ իր ծոցէն ծնած, սնած եւ աճած սերունդները, արդարացուցած են իրենց վրայ դրուած յոյսերն ու պարտաւորութիւնները:

Ատոնց լաւագոյն ապացոյցներն են այն շրջանաւարտները, որոնք հոս թէ այլուր, կը փայլին իրենց ազգային պատկանելիութիւններու չափանիշներով, իրենց միջավայրային հետիւսկրթականներով, իրենց մասնագիտական յաջողութիւններով, ինչ որ կ'արտայայտէ ու կը հաստատէ, որ բազմամեայ Միութիւնը, ինչպէս այլ մարզերու պարագային, նաեւ կրթական բնագաւառներէն ներս, կը գտնուի իր հարազատ պարունակին մէջ, անայլայլ շարունակելու իր վերելքն ու ծառայութիւնները, յանուն իր ժողովուրդին ու համատարած հօտերուն կարիքներուն եւ օժանդակութեան:

\*\*\*

Շաբաթ, 6 Յունիս 2026, եղաւ նոր եւ յաւելեալ փուլ մը, երբ Միութեան վարժարանները նոր եւ յաջողական կարգով կ'ընթացնէին իրենց 2025-2026 կրթական տարեշրջանի վկայականաց բաշխումի հանդէսը, վկայագրելու եւ պատուելու 11 շրջանաւարտները, հովանաւորութեամբ Լիբանանի Կրթական յանձնախումբին:



Միութեան Տեմիքճեան կեդրոնը վերածուած էր տօնախմբութեան փեթակի մը, միութեանական պատասխանատուներ, տնօրէնութիւն, ուսուցչակազմ, ծնողներ, հարազատներ, հիւրեր բերկրանքով եկած էին շնորհաւորելու շրջանաւարտները, այս երեւոյթը նկատելով բացառիկ յատկանշութիւն մը, քանի վկայուողները տարբեր ուղիներով պիտի ընթանային դէպի ապագայի նոր ուղիներ, մերթ իրենց մաղթանքները փոխանցելով թեկնածուներուն, մերթ ալ՝ վերջինները իրենց հաւատքի զգացումները ցուցաբերելով բոլորին, իրենց երթը շարունակելու խոստումներով, իրենց վարժարանին պատիւն ու վարկը անշեղի պահելու երդմանառութեամբ:

Ներկաներուն մէջ ուշագրաւ էին ՀԲԸ Միութեան Լիբանանի Շրջանակային յանձնաժողովի, Կրթական յանձնախումբի եւ ՀԸ Ընկերակցութեան Կեդրոնական վարչութեան անդամները, ինչպէս նաեւ միութեանական բազմաթիւ մարմիններու եւ խորհուրդներու ներկայացուցիչները, որոնք եկած էին միասնաբար մասնակցելու կրթական այս հանդիսութեան վայելքին:

Հանդիսութիւնը սկիզբ առաւ, յոտընկայս ունկնդրութեամբ Լիբանանի, Հայաստանի, ՀԲԸ Միութեան եւ ՀԵԸ-ի քայլերգներուն, ապա շրջանաւարտ-շրջանաւարտուիները պաշտօնապէս մուտք գործեցին սրահ, գլխաւորութեամբ աւագ ուսուցիչ՝ պրն. Ռաֆֆի Տէր Առաքելեանի:

Պրն. Տէր Առաքելեան յաւուր պատշաճի բացման սրտաբուխ խօսքով հանդէս եկաւ, նշելով հանդիսութեան ուսումնական լիարժեքութեան հպարտութիւնն առողջ երեւոյթը, նաեւ կարեւորելով անոր դերն ու նպաստը հայկական կրթական կենսքին մէջ, չմոռնալով յիշատակի տուրք մատուցանելու նորոգ հանգուցեալ վաստակաւոր ուսուցիչ պրն. Աւօ Չաքմաքեանի, որպէս արժանաւոր ու սիրուած կրթական մշակ:

Վաստակաւոր տնօրէն պրն. Արա Վասիլեանի բեղուն, առարկայական ու համապարփակ խօսքը, իր հարուստ գիտելիքներով, տեղեկագրութիւններով ու մանրամասներով, աւելի քան նշանակելի եւ իմաստալի եր իր բովանդակութեամբ, տուեալներով եւ իրագործումներով, որոնք լոյսին կը բերէին, թէ մեր վարժարանները ինչպիսի յառաջդի-

մութիւններով եւ յաջողութիւններով համալրուած եւ օժտուած էին:

Ապա տեղի ունեցաւ վկայականաց եւ մրցանակներու բաշխումը:

Այնուհետեւ յայտագիրը հարստացաւ շրջանաւարտներու սրտի շնորհակալիքի ու դրուատիքի ջերմ, սրտառու, խորհրդածական, անմիջական եւ անկեղծ մտորումներով եւ բարձրաձայնուած լուրջ դիտարկումներով քառալեզու ուղերձները:

Գեղարուեստական յայտագիրը տպաւորիչ էր, կոկիկ, խնամուած ու հաղորդական:

Այս ձեռնարկումները, իրենց տուրքութեամբ, մրցանակներով թէ վկայականներու յանձնումով, անհուն խանդավառութիւն, բերկրութիւն, գոհունակութիւն ու բարձր տրամադրութիւն ստեղծեցին, ի լուր մեր սաներու յառաջդիմութիւններուն, նաեւ ակամայ «հրաժեշտի» ողջոյններուն ու ծափահարութիւններուն, որոնց յաջորդեց կեդրոնի լայնածիր պատշգամին մէջ, Պատուոյ կարկանդակին հատումը, շնորհաւորանքները, մաղթանքները, նկարահանումները եւ ողջագուրումները՝ շրջանաւարտներուն ու ներկաներուն միջեւ ստեղծելով ոգեշունչ, առիւնող, ու հոգեյոյգ մթնոլորտ մը, լի կեանքի, հաւատքի, պայծառութեան եւ յաջողութեան ամենայն բարիքներով եւ սիրանքներով:

Աւարտին, «հուսկ բանք»ով հանդէս եկաւ մեր փայլուն շրջանաւարտներէն պրն. Սեւակ Հաճեքեան, որ իր դպրոցական տարիներու փորձառութեանց լոյսին տակ եւ իր ուսումնական ու դաստիարակչական գիտելիքներու իւրացումներով գրասած էր բաղձալի դիրքեր, որուն համար երախտապարտ էր թէ՛ իր վարժարանին, թէ՛ Միութեան: Ան իր խորհրդածութիւններով դարձաւ թարգմանը իր սերնդակիցներուն, որոնք հետ, միասնաբար ու հաւաքաբար, կրթական բարձրագոյն չափանիշներով, հասած են իրենցմէ ակնկալուած փայլուն արդիւնքներու, ինք դառնալով անոնցմէ մէկը՝ Միութեան վարկը, վարժարանին համբաւը եւ հայրութեան պատկանելիութիւնը բարձր պահելու արժանաւորութեամբ:



\*\*\*

Պատուաբեր հունձք մը, օրինակելի բերք մը, հպարտալի հոյլ մը, խոստմանքի կորիզ մը եւ յուսատու բուռ մը շրջանաւարտներու, ինչպէս իրենց խորհրդներու հետքերով, կը շարունակէն աւելիով արժեւորել եւ արժեցնել իրենց ունակութիւններն ու շնորհքները, լաւագոյն ու մեծագոյն արդիւնաբաշխումներով:



### ՀԲԸՄ-ի վարժարաններու շրջանաւարտներ 2025-2026 տարեշրջան

#### Պաշտօնական Ընկերա-Տնտեսական բաժին (Socio-Economics)

Պապահեքեան Լուսա \*\*, Ստեփան Սերլի, Ֆըրնըզեան Մարք, Ճուլթոյեան Ժանէթ \*, Էլէյանի Ծորճի, Գոհելեան Փերլա, Թագուրեան Վարանդ, Կեպելեան Հրաչ \*

#### Պաշտօնական Գիտական բաժին (General Sciences)

Յակոբեան Էնտրո \*\*, Գալպեան Փառլոյ \*\*, Գոճայեան Ալէքս

\*\* Բարձր Պատուոյ Յիշատակութիւն  
\* Պատուոյ Յիշատակութիւն

ԱՌՈՂՋԱՊԱՇՏՄԱՆ ԲԱՏԱՆՈՒԿ ԱՌԱՋԱՐԿ՝ ԱՅԺՄ ԿՐԻՄՔ ՕԳՏՈՒՆ ՏԱՐԱՆՈՒԾՄԱՆ ԲՆՆՈՒԹԻՒՆՆԵՐԸՆ ԿԷՍ ԳԻՆՈՎ:

ՄՏԱՆԷՔ 50% ԶԵՂՉ՝ ԱՌՈՂՋԱՊԱՇՏՄԱՆ ԿԱՐԵՈՐ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ:

**Առաւելութիւններ**

- Կէս Գին. 50% զեղՉ՝ արեան բոլոր քննութիւններուն համար:
- Մատչելի ճառագայթային նկար. 25% զեղՉ՝ ճառագայթային նկարի (X-ray) բոլոր ծառայութիւններուն համար:
- Բարձր Որակ. Վստահելի քննութիւններ՝ «Սէն Մարք» (St. Marc) տարրալուծարաններուն մէջ:

**Ինչպէ՞ս Օգտուիլ**

- Այցելեցէ՛ք ՀԿԲՄ-ի դարձնաւորները:
- Խնդրեցէ՛ք ձեր բժշկական ուղեգիրը:
- Ներկայացուցէ՛ք ՀԿԲՄ-ի ուղեգիրը «Սէն Մարք» տարրալուծարան:
- Ստացէ՛ք 50% զեղՉ անմիջապէս:

Առաջնահերթութիւն տուլք ձեր առողջութեան այսօր: Այս բացառիկ առաւելութիւնը հիմա գործող:

**ԱՊԱՔԻՆՄԱՆ ՄԱՂԹԱՆՔ**

Ռըմէլի Ս. Յարութիւն Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Ս. Ղեկնոյ քիչ. Լոշխաճեանը, Թաղական խորհուրդը, Տիկնանց յանձնախումբն ու դպրոց դասը շուտափոյթ եւ լիակատար ապաքինում կը մաղթուի Ս. Վերոգ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Ս. Նարեկ առ. քիչ. **ՀԵՃԻՆԵԱՆԻՆ**, վիրաբուժական գործողութեան ելքարկուելուն առիթով:

**ՍԱՐԿԱԿԻՆԳԻՆԵԱՆ ԶԵՌՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆ-ՔԻՆ ՄԷՋ**

Օրինութեամբ  
**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ**

Կիրակի, 14 Յունիս 2026-ին, Մայրավանքի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, Սուրբ եւ Ամմահ Պատարագի ընթացքին, երեք կիսասարկաւագ դպրեկանցիներ՝

Յովսէփ կիսասարկաւագ Գալըպեան Սարգիս կիսասարկաւագ Նահապետեան Յովհաննէս կիսասարկաւագ Սաղիրեան

պիտի ստանան Եկեղեցւոյ Լուսաւորութեան առաջին կարգը՝ սարկաւագութիւնը:

Զեռնադրութիւնը պիտի կատարէ  
**ԳԵՐՇ. Տ. ՇԱՀԱՆ ԱՐՔ. ՍԱՐԳԻՍԵԱՆ**  
(Տեսուչ Կաթողիկոսարանի «Կիլիկիա» Մատենադարանի)

Սկիզբ Սուրբ Պատարագի՝ ժամը 9:30-ին  
Զեռնադրութիւն՝ ժամը 10:00-ին  
Զարոգ՝ ժամը 11:00-ին

Կոչ կ'ուղղենք մեր ժողովուրդի զաւակներուն մասնակցելու այս հոգեպարար արարողութեան եւ աղօթակից դառնալու մեր դպրեկանքի ընծայեալներուն, որպէսզի անոնք իրենց աստուածահաճոյ առաքելութեան մէջ մասն հաստատ եւ ամուր քայլերով ընթանան «դէպի աղբիւրը Լոյսին»:

**ԴԻՒՆ ԿԱՌՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ**

ՄոնթեՆ ԴԵՍԿՐԱՏ ՀԵՏԱԿԵԱՆ ԿՈՄՍԱԿՏՈՒԹԻՒՆ  
ԼԻԲԱՆԱՆԻ ԾՐԱՆԻ ԿԱՐԻՉ ՄԱՐՄԻՆ

**ՀՆՉԱԿԵԱՆ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻ ՕՐ**

ԽՕՍԷ ԿՄՈՆԵՆ՝  
ԸՆԿԵՐ ԱՆԵՔՍԱՆ ԲԵՕՇԿԷՐԵԱՆ  
Ս.Գ.Հ.Կ. ԿԵՂՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՄԱՐԱՄ

ԸՆԿԵՐ ՎԱՆԻԿ ՏԱԳԷՍԵԱՆ  
Ս.Գ.Հ.Կ. ԼԻԲԱՆԱՆԻ ԾՐԱՆԻ ԿԱՐԻՉ ՄԱՐՄԻՆԻ ԱՏԵՆԱՊԵՏ

Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 19 Յունիս 2026-ի երեկոյեան ժամը 7:30-ին, Սին Էլ Ֆիլի բաղաբապտարանի սրահին մէջ:

**ԳՐԱԲԵՐ**

**Հ.Կ.Բ.Մ. ԴԱՐՄԱՆԱՏՈՒՆ ԸՆԿ. ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ԿԵՂՈՐ**

Դարձնաւորները բաց է ամէն օր ստուտան ժամը 9:00-էն մինչեւ կէսօր, եւր ժամը 3:00 քաջի Կիլիկիոյ օրերէ:

Ձեր ուշադրութեան կը յանձնենք նաեւ թէ զիջարանը բաց է նաեւ նոյն ժամերուն:

**Երկուշաբթի**

- Բժշ. Յակոբ Գլընճեան - Ատամնաբոյժ
- Բժշ. Անի Երկանեան - Մանկաբոյժ

**Երեքշաբթի**

- Բժշ. Քրիս Կարպէտեան - Ատամնաբոյժ
- Բժշ. Ռաֆֆի Փոլատեան - Գեղձային հիւանդութիւններ
- Բժշ. Արթուր Յոլլա - Ակնաբոյժ
- Կարօ Ասեան - Ֆիզիքական բուժում
- Բժշ. Մարալ Պոյանեան - Հոգեբան

**Չորեքշաբթի**

- Բժշ. Յարութ Տէմիրճեան - Ուկրաբոյժ
- Բժշ. Յակոբ Գլընճեան - Ատամնաբոյժ
- Մարիլին Առն - Սննդաբան

**Հինգշաբթի**

- Բժշ. Քրիս Կարպէտեան - Ատամնաբոյժ
- Կարօ Ասեան - Ֆիզիքական բուժում
- Բժշ. Քրիս Կարպէտեան - Ճեղքաբերութեան եւ կանանց հիւանդութիւններ
- Բժշ. Միսակ Արքանեան - Վիրաբոյժ
- Բժշ. Մարալ Պոյանեան - Հոգեբան

**Ուրբաթ**

- Բժշ. Յակոբ Գլընճեան - Ատամնաբոյժ
- Բժշ. Անի Երկանեան - Մանկաբոյժ
- Բժշ. Միսակ Արքանեան - Մրտաբան

**Շաբաթ**

- Բժշ. Միքեալ Խոնէլար - Քիւր, կոկոր, ականջ
- Բժշ. Էլի-Քոնի Փոլատեան - Ընդհանուր բժշկութիւն
- Բժշ. Քրիս Կարպէտեան - Ատամնաբոյժ
- Բժշ. Յակոբ Գլընճեան - Ատամնաբոյժ

Facebook: @aebu.org, Instagram: @aebumedicosocialcenter, Phone: 01 560 704 / 71 356 035

**www.araraddaily.com**

**ARARAD DAILY NEWSPAPER**

Tel.-Fax: 01-565599 | P.O.Box: 175275 Mar Mikhael Beirut | Lebanon | www.araraddaily.com email: araradart@gmail.com

ارارات جريدة سياسية يومية أرمينية  
تصدر عن شركة مسيسية للمطباعة والنشر (ش.م.م.)